ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2017 թվականի N 251-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Աբգար Մրազի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 2-րդ դաշտի 6/4; 6/9 հասցեի հողակտորում տալ 180 հոգու համար հանդիսությունների սրահի կառուցման շինարարության թույլտվություն:

2. Քաղաքացի Վահագն Սերգեյի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 12-րդ փողոցի թիվ 22/1 հասցեի հողակտորում տալ գոյություն ունեցող ավտոտնակի վրա բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն:

3. Պարտավորեցնել Աբգար Մրազի Հովհաննիսյանին և Վահագն Սերգեյի Վարդանյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2017 թվականի N 252-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Կնյազ Վանյայի Ադամյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 6-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 11/1 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան ընդլայնման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել Սուսաննա Թադևոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2017 թվականի N 253-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի բ) ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների (այսուհետ՝ ԽՄ-ների) անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքապետարանի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության նպատակով ձևավորել հանձնաժողով հետևյալ կազմով.

Պետրոսյան Ռոբերտ - համայնքի ղեկավար (նախագահ),

Թադևոսյան Սուսաննա

Մարգարյան Անահիտ

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2016 թվականի հունիսի 10-ի «Հանձնաժողով ձևավորելու մասին» N 119-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2017 թվականի N 254-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի և համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների (այսուհետ՝ ԽՄ-ների) անհատական կազմում առաջադրել համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների հետևյալ անդամների թեկնածությունը.

1) Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ.

ա.Մարգարյան Անահիտ Արամի - համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,

բ.Իսոյան Տաթևիկ Մխիթարի - «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ,

գ.Գասպարյան Արմիդա Արշավիրի - «Ձորաղբյուր մանկապարեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ:

2) Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի ԽՄ.

ա.Մարգարյան Արամազդ Արայի – համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,

բ. Խոցանյան Էդգար Գուրգենի - «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն,

գ.Կրպեյան Ռուզաննա ժորժիկի- «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» ԱԿՈՒՀ ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ:

3) Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի ԽՄ.

ա.Թադևոսյան Մարգարիտա Միխայիլի - համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,

բ. Սահակյան Զարմինե Համլետի - Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» ԱԿՈՒՀ ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ,

գ.Խաչատրյան Նվարդ Էդուարդի - «Ձորաղբյուր մանկապարեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Սուսաննա Թադևոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 24
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2017 թվականի N 255-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Ջանվել Ջումշուդի Զոհրաբյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Ջանվել Ջումշուդի Զոհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 13-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 14 հասցեից բաժանված S_1 = 527,7 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 13-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 14 և S_2 = 749,5 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 13-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 14/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 28
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2017 թվականի N 256-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Թույլատրել Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի տնամերձ հողամասերի ոռոգման համակարգի կառուցման ծրագրի իրականացման կոմիտեին՝ իրականացնելու Ջրվեժ համայնքի տնամերձ հողամասերի ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն N TKQ-09 պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 28
գ. Ջրվեժ